

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔԸ

Վարդուհի Բալոյանի՝ «19-րդ դարի և 20-րդ դարասկզբի հայ թարգմանական մանկագրությունը (անգլիալեզու նյութերի թարգմանությունների հիման վրա)» ատենախոսության մասին

Այսօր համաշխարհային գրականագիտությունը կարևոր դեր է հատկացնում մանկական գրականության ուսումնասիրությանը. հրատարակվում են տարբեր մենագրություններ, հոդվածներ, նեղ ոլորտային հանդեսներ ու հատուկ համարներ, որոնք քննում են երեխաներին հասցեագրված երկերի տարաբնույթ հարցադրումները: Հայկական մանկագրության պատմությունը, սակայն, թերի է ուսումնասիրված, և բազում հարցեր մնացել են բաց: Վարդուհի Բալոյանի ատենախոսությունը նվիրված է հենց այս կարևոր, բայց թերարժևորված խնդրի քննությանը, որ հնարավորություն է տալիս ոչ միայն դիտարկելու հարցի պատմությունը և ակունքները, այլև բավարար տեսական ու գաղափարական հիմք ստեղծելու ժամանակակից մանկագրության զարգացման և ապագայի հեռանկարների համար:

Ատենախոսությունը նվիրված է հայ մանկական գրականության սկզբնավորման շրջանի՝ XIX դարի հանդեսներում հրատարակված թարգմանական գործերի քննությանը, ինչը միահյուսում է և՛ թարգմանական, և՛ ինքնուրույն գրականության տեսական ու մեթոդաբանական առանձնահատկությունները: Նշյալ դարի մանկական մամուլում այս երկու բնույթի երկերը մեծ մասամբ միախառնված են. հեղինակներն ուղիղ կամ միջնորդավորված թարգմանություններ են կատարել ժամանակի եվրոպական հանդեսներում տարածված գործերից, դրանք ներկայացրել նույնությամբ կամ ենթարկել այնպիսի ձևաբովանդակային փոփոխությունների, ուր կապը խզվել է բնագրից, տեքստը՝ հայացվել: Որպես օրինակ հիշենք «Թատրոն. Բարեկամ մանկանց» հանդեսում հրատարակված «Կարմիր Վարդուկը» հեքիաթը, որը Հակոբ Պարոնյանը փոխադրել է Շարլ Պերոյի «Կարմիր գլխարկը» հեքիաթից: Փոխադրության ընթացքում երգիծաբանն այնպես է հայացրել

Ֆրանսերեն տեքստը, որ ուսումնասիրողներն այն երկար տարիներ համարել են հայկական ժողովրդական հեքիաթի ինքնուրույն մշակում:

Նման օրինակները XIX դարի մանկական պարբերականների էջերում բազմաթիվ են, և այսօր հետազոտողի համար մեծ բարդություն է պարզել՝ տվյալ նյութը հայկական է, թե՞ փոխադրություն այլ լեզվից: Ոլորտում կա աղբյուրագիտական և թարգմանական-համադրական վերլուծությունների ցավալի բացթողում, որին լրացնելու է գալիս Վ. Բալոյանի լրջմիտ աշխատանքը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, համապատասխան ենթաբաժիններ պարունակող չորս գլուխներից, եզրակացություններից, ընդգրկված բնագրային և տեսական նյութին համապատասխանող օգտագործած գրականության և հապավումների ցանկերից:

Ներածության մեջ Վ. Բալոյանը ներկայացնում է հարցի պատմությունը, թեմայի արդիականությունն ու գիտական նորույթը, առաջադրված խնդիրները և նպատակները, հետազոտության մեթոդաբանությունը:

Ուսումնասիրության ընթացքում հեղինակը համադրել է աղբյուրագիտական, գրականագիտական, գրահրատարակչական, տեքստաբանական գիտակարգերի մեթոդները՝ հստակ ներկայացնելով ժամանակաշրջանը, միջավայրը, իրադրությունը և դրա ծնունդ դարձած մանկական գրականությունը: Այս դիտանկյունից հեղինակը կատարել է բավական արժեքավոր աշխատանք՝ ներկայացնելով սոցիալ-քաղաքական տարբեր իրողությունների պայմաններում և աշխարհագրական տարբեր վայրերում ստեղծված հայ թարգմանական մանկական գրականությունը՝ ըստ ժամանակի ու միջավայրի թելադրած տրամաբանության: Ըստ այդմ՝ աշխատանքում ներկայացված են Հնդկաստանում, Իտալիայում (Միսիթարյան միաբանություն), Օսմանյան կայսրությունում (Արևմտյան Հայաստան) և Ռուսական կայսրությունում (Արևելյան Հայաստան) հրատարակված թերթերը՝ յուրաքանչյուրը՝ իր տեղի ու միջավայրի իրականության համապատկերում:

Ատենախոսի ուսումնասիրությունն ունի տեսական կարևոր արժեք. հեղինակը չի կենտրոնանում միայն հայ մանկագրության խնդիրների ուսումնասիրության վրա, սեղմ

ներկայացնում է նաև համաշխարհային (մասնավորապես՝ անգլիական) մանկագրության ծագման և զարգացման պատմությունը, մասնավորապես առաջին մանկական գործերի կարևորությունն ու առանձնահատկությունները՝ դրանց հիման վրա հաջորդող գլուխներում քննելով հայ մանկական գրականությունը: Ասել է թե՛ հայ գրականությունն ըստ էության չի ներկայացվում որպես առանձին, կտրված միավոր, այլ քննվում է դրա դերը միջազգային գրական կապերի ու հարաբերությունների պրիզմայում, ինչն ատենախոսության ժամանակակից կարևոր պահանջներից մեկն է:

Վ. Բալոյանը կատարել է հետևողական աշխատանք՝ ուսումնասիրելով և ներկայացնելով մանկական վաղուց մոռացված հանդեսների էջերում հրատարակված թարգմանական գործերը և շատերի պարագայում գտնելով հնարավոր սկզբնաղբյուրը: Այն չգտնելու դեպքում անգամ հեղինակը փորձել է դիտարկել՝ եվրոպական մամուլում կամ այլ բնույթի հրատարակություններում քննվող ժամանակահատվածում նույն կամ նման վերնագրով ինչ նյութեր են հրատարակվել, կամ միջնորդավորված ինչ աղբյուրներից կարող էին օգտվել հայ թարգմանիչները և այլն: Այս մանրակրկիտ աշխատանքը միանշանակ կունենա նաև իր ոչ ուղղակի դրական ազդեցությունը հետագա ուսումնասիրությունների վրա, երբ ներկայացված ճանապարհային քարտեզի շնորհիվ հնարավոր կլինի գտնել այլ աղբյուրներ ևս: Հիշատակելի է, օրինակ, նույն նյութի երեք փոխադրված տարբերակների համեմատական քննությունը: Ատենախոսը դիտարկել է «Թութակ Հայկազեան»-ում տպագրված «Նշանախօս Վարժապետ», «Թատրոն. Բարեկամ մանկանց»-ի «Նշանացի խօսակցութիւն» և «Բուրաստան մանկանց»-ի «Իմաստուն հիմարն կամ նշանած դասատուն» պատմվածքները, որոնք նույն օտարալեզու նյութի տարբեր ժամանակների փոխադրություններն են: Թեև բուն սկզբնաղբյուրը գտնել չի հաջողվել, այնուամենայնիվ արդեն իսկ կատարված աղբյուրագիտական կարևոր աշխատանքն ու տարված համեմատական վերլուծությունը ևս խոստումնալից են:

Բալոյանի ուսումնասիրությունն աչքի է ընկնում դրական բազմաթիվ կողմերով և առանձնահատկություններով, այն անդրադառնում է շատ կարևոր հարցերի քննությանը, և, որ պակաս կարևոր չէ, ամենուր իրենց զգալի են տալիս խնդրո առարկայի լավագույն

մասնագետներից մեկի՝ գիտական ղեկավարի հոգաժողությունն ու արգասաբեր ուղղորդումները:

Բայց և այնպես՝ ինչպես գիտական ցանկացած աշխատանք, Վ. Բալոյանի թեկնածուական ատենախոսությունը ևս ունի որոշ թերացումներ ու բացեր, որոնք, ի դեպ, կարող էին նաև հանգիստ խղճով չարձանագրվել, քանի որ դրանք բնավ չեն ստվերում ըստ ամենայնի բարձրարժեք հետազոտությունը: Թերությունների մատնանշումները և շտկումները, սակայն, կարծում եմ, կարող են շահեկան լինել այս ատենախոսության հիմքի վրա ընթերցողի սեղանին ապագայում դրվող արժեքավոր ու կարևոր մենագրության համար: Ահա իմ նկատառումները.

1. Աշխատանքի գլուխներն առանձին-առանձին վերցված ուշարժան են ու հավաք, բայց ամբողջության մեջ, իբրև մեկ միավոր, ատենախոսությունը փոքր-ինչ հատվածական է: Օրինակ՝ «Ազդարար» հանդեսի մասին հեղինակը մանրամասնորեն խոսում է 1.3 («Հայ-անգլիական գրական կապերի սկզբնավորումը») և 2.2 («Թարգմանական մանկագրության առաջին օրինակները և դրանց գաղափարական ուղղությունները հնդկահայ համայնքում») ենթագլուխներում, ապա դրան անդրադառնում է նաև 4.1 («Թարգմանական միտումներն արևելահայ գրական միջավայրում 19-րդ դարի վերջից մինչև 20-րդ դարասկիզբ») ենթագլխում: Նույն հանդեսին տարբեր տեղերում անդրադառնալը թերևս արդարացված կլիներ, եթե գլուխներն ու ենթագլուխները բաժանված լինեին ըստ կոնկրետ տեսական խնդիրների կամ հարցադրումների, բայց ատենախոսության բաժանման հիմքը տարածական-գաղութային է՝ հնդկահայ գաղութ, Մխիթարյաններ, արևմտահայ ու արևելահայ մամուլ: Ամեն անգամ՝ նույն հարցի մասին խոսելիս, հեղինակը նորից տալիս է ժամանակաշրջանի ու հարցի պատմությունը, ինչն արդեն արել էր նախորդ գլուխներում:

2. Վ. Բալոյանը կատարել է հսկայածավալ աշխատանք՝ աշխատելով մամուլի արխիվների հետ ու համադրելով մեծածավալ նյութը. նա դիտարկել է շատ աղբյուրներ, բայց երկու էական պարբերական դուրս են մնացել ուսումնասիրությունից: Նախ՝ «Թատրոն. Բարեկամ մանկանց» հանդեսը, որը գեղարվեստի դիտանկյունից միանշանակ գերազան-

ցում է արևմտահայ մյուս պարբերականներին: Հանդեսը միայն հիշատակվում է մի քանի տեղ: Ատենախոսը թերևս իրավացիորեն շեշտի, որ Հ. Պարոնյանի փոխադրությունները կատարվել են ֆրանսերենից, իսկ իր ուսումնասիրության հիմնախնդիրը անգլալեզու թարգմանություններն են: Եվ նա ճիշտ կլիներ, եթե այլ՝ գեղարվեստական ու գաղափարախոսական դիտանկյուններից ավելի թերի հանդեսների պարագայում չքննվեին ֆրանսերենից ու անգամ հունարենից արված թարգմանությունները, չդիտարկվեին այն հանդեսները, որտեղ չկան անգլերենից արված թարգմանություններ: Այս պարագայում մոտեցումը ճիշտ չէ, և Պարոնյանի մանկական հանդեսը նույնպես պետք է ներառվի ուսումնասիրության մեջ:

Բացի այդ՝ անտեսվել է ամերիկացի միսիոներների կողմից հրատարակվող «Աւետաբեր տղայոց համար» հանդեսը (1872-1915). այն հիշատակվում է միայն տողատակում: Ատենախոսը թերևս բանավիճի, որ հանդեսն ունի ընդգծված կրոնական բովանդակություն, քարոզչական բնույթ և դրանում գեղարվեստական արժեքավոր գործեր գրեթե չկան, այդ պատճառով էլ հանդեսը չի դիտարկվել: Պնդումը մեծ մասամբ ճիշտ է հանդեսի առաջին տարիների հրատարակությունների առումով, բայց հետագա համարներում բազմաթիվ են անգլերենից կատարված հետաքրքիր ու արժեքավոր թարգմանությունները. հիշատակեմ թերևս դրանցից մեկը՝ Ջորջ Մաքդոնալդսի «Գահաւանդին վրայի դղեակը» (“The Castle”), որի ուսումնասիրությունից աշխատանքը հստակորեն կշահեր:


3. Աշխատանքում նկատելի են նաև լեզվական մանր-մունր մեղանշումներ ու համակարգչային վրիպակներ, օրինակ՝ «անգլերեն *լեզվից*», էջ 7: Չի պահպանվում նաև հղումների միօրինակությունը. հղումների մի մասը տրվում է տողատակում, մյուս մասը՝ բուն տեքստում, և այլն:

Ներկայացված վրիպակները, սակայն, կրկնեմ, չեն ստվերում ընդհանուր աշխատանքը. ատենախոսությունը ծավալով, ձևավորմամբ ու բովանդակային խորությամբ, նաև արդիական հարցադրումներով ու դրանց գիտական լուծումներով լիովին համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող արդի պահանջներին: Հեղինակի ոճն ու լեզուն գիտական են, աշխատանքի կառույցը՝ տրամաբանական և

հարթ, գիտական ապարատը՝ կանոնավոր և լիարժեք: Այս ամենին հավելեմ և այն, որ տպագրված գիտական հոդվածներն ու սեղմագիրը արտացոլում են ատենախոսության հիմնական բովանդակությունը:

Ասվածը լիովին հիմք է տալիս պնդելու, որ Վարդուհի Աշոտի Բալոյանի՝ «19-րդ դարի և 20-րդ դարասկզբի հայ թարգմանական մանկագրությունը (անգլիալեզու նյութերի թարգմանությունների հիման վրա)» թեկնածուական ատենախոսությունը՝ Ժ. 01. 01 - «Հայ միջնադարյան և նոր գրականություն» մասնագիտությամբ, միանգամայն բավարարում է ներկայացվող պահանջները, և հեղինակը լիովին արժանի է իր հայցած՝ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝



Արսեր Մակարյան

բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ԵՊՀ ակադ. Հրանտ Թամրազյանի անվան


հայ գրականության պատմության և

գրականության տեսության ամբիոնի վարիչ

15. 01. 2026 թ.

Հասցեագրում էմ.

ԵՊՀ թիվ 1 համալսարանի
Բ. Գ. Բ., դպրանոց



Վերջ
Լ. Գրականության